

Մ Ա Ս Ի Ս

Հ Ա Ն Գ Ե Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՎՈՒԻ ՍՍԵՆ ԾԱԲԱԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄՐԱԳՐԱՊԵՏ
ԴՐԻԴՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ

Պոլիս եւ Դաւառներ	40 Ղըուշ
Ռուսաստան	4 Բուպի
Եւրոպա	10 Ֆրանկ

ՀԱՍՏԵ

Ղաղաքիս, Իգմիրի Օղլու խան, քիս 3-4

ԻՏԵԱԿԱՆԸ ՈՒ ԻՐԱԿԱՆԸ

Հաւին ու հաւկիթին պատմութիւն-
թիւնը կրկնել չըլլար քիչ մը՝ գրական-
ութեան և բարքերու փոխադարձ ազ-
դեցութեանը վրայ խօսիլ:

Պ. տը Բալիսի այս ճշմարտութեա-
նը վրայ խորհելու կ'ստիպուի մարդ,
երբ կը քննէ այն մեծ փոփոխութիւնը,
որ՝ գրականութեան յարակից՝ տեղի
ունեցած է յոսանք հինգ տարիէ ի վեր
մեր ձգտմանցը մէջ:

Քառորդ դար առաջ, երբ Մամուր-
եան Հրայճ-ները և Զիլինկիրեան
Թշնամիները կը թարգմանէին, երբ Ա.
Տիւմաի, Իսթէն Սիւրի և Տաշ Մարքի-
զուհույն գործերովը կ'ընկնէր սե-
րունդը՝ չեմ գիտեր ինչո՞ւ՝ տ'Արդան-
եանի վեհանձնութենէն ու Պ. Մատենի
ներող բարութենէն՝ բան մը կար ժա-
մանակին երիտասարդութեանը վրայ-
երիտասարդութիւն որ աւրու՞ն գաղա-

փարներ ունենալ կը թուէր դպրոցա-
կան գրասեղաններու վրայէն:

Ազնուապետական լեզուն կը խօս-
ուէր սրահներու մէջ և վեհանձնու-
թեան արտայայտութիւն կար շատ ան-
գամ անհատական յարաբերութեանց
մէջ իսկ:

Ռամկին հայհոյութիւնը, փողո-
ցի մարդերու սիրային քաջագործու-
թիւնները շատ պզտիկ բաներ էին այն
ժամանակի դրողներուն համար, որոնք
միտ կեանքի ազտատութիւններէն վեր
բարձրանալ կ'ուզէին ու «գաղափարի
աշխարհին մաքուր մթնոլորտին մէջ» կը
փնտռէին իրենց հաճոյքները:

* * *

Անկէ ի վեր կարեւոր փոփոխու-
թիւններ կրեց աշխարհ:

Փրանքեզերման պատերազմին հե-
տեանքները քաղաքականութեան, ինչ-
պէս նաեւ Զուլի մեծ հարուածը գը-
րականութեան մէջ տապալեցին դա-
ղափարականի և իտեականութեան

հոյակապ շէնքը, որ բոլոր իր գեղեցկութիւնը կորսնցուց հաշուի և քննութեան հետադադրութեանց տուեալ:

Երկինքը գիտած ատենը հորին մէջ ինկող գիտնականին նմանցուն իտէականութեան կողմնակիցները, և ամեն մարդ թիւնք մը — մանաւանդ գեանաքարչ (հարկային ըստ նոր ասութեան) միջավայր մը — փնտռել սկըսաւ իր գրական տքնութեանցը համար:

Իրական գրականութեան շահագրգռիլ սկսանք. իրական օգուտը փնտռելիք մեր գործերուն մէջ. ու իւր, ինքն խուզարկելու ելանք զգացումի գործերուն մէջ իսկ:

Ինչպէս որ Հիւկոյի ֆիզիոլոգիան կեղեւը միայն հասկցեր էինք հիւթին տեղ, այնպէս ալ իրականութեան ձեւովը շատացանք, փոխանակ անոր ոգւոյն եւ ուղղութեանը թափանցելու՝ որ գիտութիւն մ'է համակ:

Ու մինչեւ մէկ կողմէ մեր բարոյական համոզումները կը փոխուէին նեղ հաշույ մը ազդեցութեանը տակ, միւս կողմէ իրական գրականութեան գաղաթնակէտը հասնիլ կարծեցինք, ուսմիկին հայհոյութիւնը ամբողջ տառերով գրելով ու գռհհիկ կնկան խօսակցութիւնը ճշգրտութեամբ մը կեղծելով:

* * *

Ձեւին ու ոգւոյն տարբերութիւնը չհասկնալնու համար է որ մինչ վերացական մարդիկ էինք իտէականութեան յարած ատեննիս, շատ դրական դարձանք իրական գրականութեան յարեւնուս պէս:

Առաջ ելաւ՝ լաւին ամենաբարձր ըմբռնումը՝ կը շփոթէինք ցնորքին (chimère) հետ:

Հիմայ, իրական կեանքի, իրական գրականութեան ձգտումն ալ, իտէա-

կանութեան ու վիպական գրականութեան ձգտումին պէս, իր ամենէն անկարելոր մասին մէջ կը սահմանափակի մեր գրականութեան համար:

Ձեւը՝ որ մանրամասնութիւն մ'է միայն՝ սկզբունքի տեղ կը բռնէ և ուրուագիծը կը ներկայացուի իբր պատկեր:

Ինչ որ գրեցինք իրականին ու իտէականին համար, մեր նկարագրին արտայայտութիւնն է գրականութեան մէջ:

Որչափ որ վարպետ ենք փշեւ, ճանջեւ արհեստին մէջ, այնքան համբաւ մնացած ենք իւրեքեւ, հարեւմասին:

Արեւմուլը կը շատանանք քահանային հաւատալու համար. և միշտ կանթեղը վառելու մոռցած ենք երբ մագական լապտերը իտես կը հանենք:

Ասոր համար է որ կարծես թէ բնազդական ընկրկում մը ունինք յառաջդիմութենէ. ամեն նորութիւն ազիտարեր կը դառնայ մեղ համար:

ՏԻՐԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ

ԱՒ, ՍԱ ԿԻՆԵՐԸ

Ասոր Գրքին «Խնդրեցէք և տացի ձեզ» ին կըթնած՝ անոր անտարբերութիւնը զիս վհատեցնելու չափ արտասովոր չէր թուեր ինծի, քանի որ այդ վառվառն աչքերը անզգայութիւն ենթադրել չեն տար. այդքան փառաւոր կուրծքի մը տակ կարելի չէ երեւակայել պաղ սիրտ մը և վերջապէս իր հեշտաբոյր շրթները «Ձէ» ըսելու համար պէտք չունէին այդքան կարմիր ըլլալ... ի բնէ:

Եթէ ոչ ժպիտի մը՝ գոնէ քաջաբերիչ ակնարկի մը ողորմութիւնը չէր ընդ ինձ, անդութը, և փափաղ մը կ'զգայի բզիկ բզիկ ընել այդ կուրծքը, համոզուելու համար թէ՛ անոր տակի սիրտը քարէ չէր:

Եւ դէշ ալ պիտի ընէի:

Պարունակողը պարունակեալէն չատ աւելի կ'արժէր:

Այսքան յամառութեանս փոխարէն՝ մի միայն երբեմն երբեմն հպարտ գոռող ակնարկներ կը նետէր վրաս, այն ակնարկներէն որք զձեռք կը վիրաւորեն, բայց չեն մոռցներ. . . բարեբաղդաբար:

Եթէ ատանկ փոքրիկ անյաջողութիւնները կարող ըլլային զմեզ կասեցնել մեր պահանջոտ ճամբուն մէջ, մարդահամարի թուանշանները որքան պիտի պզտիկնային: Սիրոյ մէջ չափահասները տղոց կը նմանին, որքան: «մի ըներ ըսես» այնքան շատ կ'ընեն:

Բացառութիւն մը չընելու համար, ես ալ անոնց պէտք նպատակակէտ մը ըրած էի ինծի՝ այդ կնոջ բաշխած հրապոյրներէն մաս մը ունենալ, և ասոր համար զոհողութիւններ ընելու կամքը չէր որ կը պակսէր ինձ:

Բայց սակայն չէք գիտեր որքան անխիղճ էր ինծի նկատմամբ այդ կինը. երբ պատահմամբ աչքերը ինձ կը դարձնէր, շիշերս ոտք կ'ելլէին, բանգի այդ ակնարկին մէջ ուրիշ բան կարելի չէր կարգալ բայց եթէ յամր հրաման մը զոր սապէս պիտի թարգմանէին կնադէտները—«Տեղդ կեցիր»:

* * *

Երկուշաբթի առաւօտ Շիրքէթի 40 թիւին մէջ դէմ առ դէմ ինկանք:

Իրա՞ն է:

Կը ժպտի կոր:

Չորս կողմն կը նայիմ, և կը համոզուիմ թէ ուրիշ մը ուղղեալ չէ այդ ժպիտը որ Աստուծոյ՝ կանանց տուած ընծաներուն ամենէն հիանալին է: Ինչո՞ւ յանկարծակի այս փոփոխութիւնը. ի՞նչ եղաւ:

Հրաշքներ կըլլան կոր գեռ: Բայց իրաւ կը խնդայ կոր. կարծես լեզուին տակ բան մը ունի զոր չի կրնար ինձ ըսել:

Քոփի ընկերուհւոյն դառնալով և աչքը վրաս, շատ մը բաներ կը փափայ:

Երկուքն ալ կ'սկսին ժպտիլ խնդալ:

Ատանկ յաջողութեան մը չէի սպասեր, ի՞նչ սուտ ըսես:

Երջանկութիւնս այնքան անակնկալ կերպով անսահման էր, որ առածին սա խօսքերը յիշեցի թէ «Անօթի հաւը ինքզինքը ցորենի ամբարանոցի մը մէջ կ'երեւակայէ»:

Հապա աքաղաղները:

Մինչեւ կամուրջ հրեշտակներու թեւերուն վրայ ճամբորդեցի, և բնականաբար այդ կնոջ հոտէն երթալ ուղեցի. կարելի էր միթէ այդ հանելուկին լուծում մը չի փնտռել քանի որ ծայրի պարզեւր ոչ արծաթէ ժամացոյց մըն էր և ոչ ալ լրագրոյ վեցամսեայ բաժանորդագրութիւն մը:

Ո՞վ կ'ըսէ թէ կամուրջը երկայն է:

Մէկ ծայրէն միւս ծայրը ի՞նչպէս շուտ անցայ, իրաւ որ չեմ գիտեր:

Թիւնէլին մէջ նորէն ժպիտներ, նորէն խնդուկներ:

Ատանկ յաջող երկուշաբթի մը երբեք չէի ունեցած:

Հիմա շիտակ ճանքան ենք. քսան քայլ հեռուէն անոնց պճեղները դիտելու վրայ եմ:

Պօճ Մառչէին ցուցափեղկին առջեւ կանգ կ'առնուն և հետաքրքրութեամբ բան մը դիտելու վրայ են:

Անոնք կ'անցնին, ես կը կենամ:

Աքանջելի շրջանակի մէջ հիանալի հայելի մը ի տես զրուած է:

Կ'արժէ որ նայի մարդ:

Ի՞նչ չար ժամ էր ատիկա: Երկնքի եօթներորդ յարկէն երկիր ինկած ունի՞ք:

Ես ինկայ:

Այդ ժպիտները, այդ ակնարկները ի՞նչ բանի կը պարտիմ եղեր, գիտէ՞ք:

Փողկապս դնելու մոռցած ըլլալուս:

Ատանկ աղէկ սկսուած օր մը ատանկ գէշ կը վերջանայ եղեր:

Յ. ԼԱՓԻԱՐ

Յ Ո Ւ Ծ Ե Ր ⁽¹⁾

Հեռո՛ւն, հեռո՛ւն, լուրի մը շուշին ծալքին տակ
Թրթրուացող աղօտ լոյսին պէս անուշ
Նայումաճրներ կան մերձ արցունքոտ, մերձ
յրստակ,
Որ կը յուզեն կեանքիս իլծերն ինձ անյուշ:

Պուրակին թոշ ըստուերներուն տակ մըթին,
Ուր զեփիւռներ ծաղկանց ծոցին կ'այցելեն,
Ուր բուրմանց թարմ ծիածաններ կը փըթնին,
Միշտ կը գլտնէ հոգիս յուշիկ մ'անցեալէն:

Լայն հոսանք մը՝ որ ծոպերով լուտածիր,
Կը կոծկոծի սուրտրելով սարէ սար,
Յուզուներ մ'ունի, տենդ մը վազքին մէջ անծիր,
Ուր կը յիշեմ մըտքիս ծըփանքն իմ հազար:

Ժապաւէնի զոյն մը կարմիր կամ դեղին
Կապուած սղուոր, փափուկ վըզի մը ճերմակ,
Բոց մը կուտայ հոգւոյս մարած կանթեղին,
Ուր երազիս թոյրերն հալած են հիմակ:

Իրիկուան գէտ պայծառ օդին մէջ ծաւի
Ջրւարձ սոյլեր կը սըլուլուան ինծի գո՛ւր.
Տըխուր վանկ մը, հեւք մը, հրծծիւն մը ցաւի
Լոկ սըրտիս մէջ իր արծազանգն ունի սուր:

Առտըւան մօտ խաւարտներու մէջ ոսին,
Կամ ծորի մը հոծ թուփերուն մէջ թառած,
Յայտ մը ցօղի, շաղի թափիլ մը, ո՛հ սին
Ինծի համար արցունքի շիթ մ'է սառած:

Գիշերուան լուռ ժամերուն մէջ թախծալից՝
Ազուաներու ծայներն հոփէն երբ կ'ուռին
Դողըղպալով, միշտ մըտածել կուտան ինձ
Մեռեալի մը, իր հուսկ ահեղ սարսուռին:

Ծովն ու երկինք եւ տեսիլներ ցամաքին,
Կեանքն՝ ուր մարդիկ օր մ'իսկ հազիւ կը խըն-
դան,

Յիշատակներ են ինձ համար ցաւագին,
Ուր կ'ապրի սիրտս անուրջներով անկենդան:

ՍԻՊԻԼ

ԾՐՋԱՆԱԽՈՐՑԻ ՔԱՆՈՒԹԻՒՆ

Անշուշտ անօգուտ ու աննպատակ չէր
Ուսումնական խորհուրդին այն որոշումը
որուն համեմատ քննիչ յանձնաժողով մը
կազմուեցաւ ձեռնհաս ու մասնագէտ
տասներհինգի չափ երկսեռ անձերէ, որք
պաշտօն ունին մայրաքաղաքիս տարրա-
կան և բարձրագոյն հայ նախակրթարան-
ներէն շրջանաւարտ ելլող աշակերտները
քննել և վկայական տալ անոնց:

Յանձնաժողովն արդէն իսկ ձեռնար-
կած է իր գործին՝ նախընթաց չորեքշաբ-
թի օրուրնէ սկսեալ: Բաւական ծանրաշ-
խատ այս պաշտօն աւարտելէ ետք, քննիչ
յանձնաժողովը յոյժ հետաքրքրաշարժ վի-
ճակացոյց մը պիտի ունենայ իր ձեռքը,
զոր անշուշտ հրատարակութեան պիտի
տայ, մէկէնիմէկ պատուելով քօղը որ այս-
քան երկար առնէ ի վեր ծածկած է
մեր նախակրթարաններուն իսկական վի-
ճակը: Այս հանճարեղ ձեռնարկին շնոր-
հովը պիտի գիացուի թէ այս ինչ վարժա-
րանի մէջ կրթական ո՛ր աստիճան յա-
ռաջգիմութիւն կայ, թէ՛ վկայականները
զորս ամեն տարի վարժարաններու հոգա-
բարձութիւնները կը բաշխեն շրջանաւարտ-
ներու, ո՛րչափ կրնան վստահութիւն ներ-
շնչել, և թէ, մա՛նաւանդ, դրամական
ամեն նպաստաւոր պայմաններ ունենա-
լով, ո՛ր հոգաբարձութիւնը արտաքին
ցոյցով մը չի շացուներ հանրութեան աչ-
քը և խղճամիտ անձնուիրութեամբ, ա-
չալուրջ հսկողութեամբ կը կատարէ իր
նուիրական պարտքը: Մեր ազգ. վարժա-
րաններու ներքին վիճակին խիստ մօտէն
գիտակ անձ մը շատ շուտով չի համոզ-
ուիր անոնց տարեկան փայլուն արդիւն-
քին վրայ. անձնասիրութեան չէս գիտեր
ի՛նչ լռին զգացում մը կը վարէ դպրոցի
մը ամբողջ պաշտօնէութիւնը, որ կ'ուզէ
իրեն դաստիարակութեանը յանձնուած
աշակերտները ճերմակերես հանել հան-
րութեան առջեւ. թերթերու մէջ անարժան
գովեստի սեթեւեթեալ արտայայտութիւն

[1] «Աշխարհիկ Գրականութեան Պատկեր» էն
բաղուած:

մը, կամ կրթական ակումբի մը մէջ սը-
պըրդուած անամէջ գրուածութիւն մը լիովին
վարձատրութիւնը կը համարուի այդ անձ-
նատրական զգացումին:

Հիմակ, Ուսումնական Խորհուրդն իր
այս խելացի որոշումով եկաւ ի սպառ-
վելով մը դնել զպրօցներու դատարա-
կութեան քօղին տակ խաղցուած այս
մնկատակին: Արժանիքները, անսուտ ար-
ժանիքները դուրս պիտի ցուան և ճշմա-
րիտ անձնութիւնն ու հմտութիւնը
եւեթ պիտի վարձատրուին:

Բայց ցաւալին սա է թէ քննիչ յանձ-
նաժողովի հրաւերին պատասխանած են
մայրաքաղաքի 40ի մօտ թաղային վար-
ժարաններէն տասերեք երկսեռ աշակերտ-
ներ միայն, Սամաթիոյ Սահակեան վար-
ժարանին, եւ Գում-գաբուի մայր վարժա-
րանին այս տարուան չըջնաւարտներէն:

Ըսել է այս երկու բարձրագոյն նա-
խակրթարանները միայն ունեցած են չը-
ջնաւարտ աշակերտներ. բարդատեսէք
հիմակ այս վիճակ ասկից չորս հինգ տար-
ուան առջի վիճակին հետ, և իրաւամբ
հարցուցէք թէ դատարարակութեան հա-
մար վատնուած այսքան ջանքեր, այսքան
աշխատանքներ կրթական ի՞նչ յառաջդի-
մութիւն ապահովել են մեր գալուցնե-
րուն, վարժապետական ժողովներ, կըր-
թական թեր ու դէմ վիճաբանութիւններ,
ուսումնական ծրագիրներ, կազմական
կանոնագրի հրատարակում, այս ամենը
վերջապէս, ըստ երեւոյթին գոհացուցիչ,
ուրիշ արդիւնք չեն ունեցեր ուրեմն՝ բայց
եթէ վերոյիշեալ ցաւառութիւն վիճակը:

Կ'ուզէ՞ք աւելի դրական ապացոյց մը
այս վիճակը չեւտող:

Քննիչ յանձնաժողովը, իր անցեալ
չաբաթ օրուան գումարման մէջ, ներկա-
յացեալ չըջնաւարտներէն մէկ քանիին
պատմութեան քննութիւն անցունել կու-
տայ: Տրուած երեք հարցումներն ընդհա-
նուր պատմութեան էն շահեկան և էն
կարեւոր մասերէն ընտրուած էին՝ ըստ
այն հարցարանին զոր վարժարանին պատ-
մութեան դասատուն ներկայացուցած էր
յանձնաժողովին: Ուրշեալ ժամն սպառե-
լէ ետք, չըջնաւարտ աշակերտները՝ չիկ-

նոտ ճակատով և վայրահակ աչքով յանձ-
նաժողովին կը ներկայացունեն հարցումնե-
րը պարունակող թուղթերը, ճեպ ճերմակ,
անարատ, գրչի հարուածէ վերծ:

Պատասխանները գրուած չէին:

Աշակերտները՝ հարցաժողովներով՝ քա-
նի մը կտորփրթուծ պատասխաններ կը
թոթովեն, առանց սակայն գոհացում տա-
լու յանձնաժողովին անգամներուն հետա-
քըքրութեանը՝ հանգէպ այս ցաւաղին կա-
ցութեան:

Որո՞ւնն է յանցանքը. — անոնց որք
գրչի քմահաճ ծայրով անօգուտ ու անի-
մաստ գովեստներ կը շուայեն մեր մա-
տալ սերունդին դատարարակութեանը
վրայ հսկողներուն, թէ անոնց որք կըր-
թական յարկի մը վարչութեան գլուխը
գտնուելով՝ հոգ չեն տանիր անոր բարե-
կարգութեանը և աչք կը գոցեն դանցա-
ռութիւններու: Ասոնցմէ ո՞րը կ'ուզէ ըլ-
լայ սակայն. խնդիրն այս արդիւնքին վը-
րայ է, զոր վշտահար սիրտով տեսան ան-
շուշտ յանձնաժողովին անգամները:

Նւ պէտք է երեւակայել թէ տակաւին
երկու վարժարանի աշակերտները ներ-
կայացած են. հասկալի է ամէն ալ...
Գրիչս կառչեցաւ հոս, վասն զի յուետես
գուշակութիւն մը պիտի ընէի. լաւագոյն
է սպասել, և՛ ժամանակին՝ արդիւնքը
միայն ծանուցանելու համեստութիւնն ու-
նենալ:

ԵՐՈՒԱՆԴ

Ա Ն Ն Ա

[ՆՈՐԱՎԷՊ]

Ամառուան հեղձուցիչ դիւեր մը, Ան-
նա, որ դեռ աչքը չէր կըցեր գոցել ցատ-
կեց անկողնէն վար, ու եկաւ պատուհա-
նին առջեւ՝ զոր տաքին պատճառով բաց
թողլու սովորութիւնն ունէր:

Պահ մը երկնքին նայեցաւ. ոսկեղօծ
արցունքներ կը ծակծկէին այդ մութ կա-
պոյտ քօղը. Աննա սարսուռ մը զգաց. իր
աչքին մէջ ալ անոնցմէ մէկուն փայլիւղ
տեսաւ:

Հով-չիկար բնաւ . գաղջութիւն մը , տարտամ ու մեղկ , աւելի եւս կը տանջէր զինքը :

Բազմոցին վրայ փռուեցաւ . թաթերը մազերուն մէջ անցուց , և վերը նայեցաւ , ոսկեղօծ արցունքներուն նայեցաւ անքթիթի :

Ճերմակ երկար չապիկը ցոյց կուտար ժանեակներուն մէջէն ճերմակ ազուր լանջք մը , և , մինչեւ իր մանր ոտքերուն հասած ատենը , երեւան կը բերէր հիանալի մարմնի մը գեղեցիկ գծազրութիւնը :

Աննա կը խորհէր , առանց պզտիկ շարժում մը ընելու . և , նուազումէ մը սթափածի պէս , շեշտով մը՝ որ միմունջքի տխրութիւնը ունէր՝ ըսաւ ինքնիրեն , կենալով ամէն բառին վերջը ,

— Թէ որ Արամը զիս սիրելու ըլլար . . երկու ամիս , երկու երկար ամիսներ , չի գալիք չէր ընել . ան մոռցաւ զիս . չմտածեց որ ես կը սիրեմ զինքը , չմտածեց որ . . .

Ելաւ տեղէն . պատուհանին առջեւը նստաւ վերատին , թեւերուն վրայ կրթնած . ու արցունքները որ տաք տաք կը հոսէին , չուղեց սրբել , գոհ ըլլալով որ անոնք գգուեն իր թալկատիպ այտերը :

* * *

Աննա տասնեկին տարեկան էր երբ Հով Սքուլէն սուրբ Բերաւ շրջանաւարտի վկայականը :

Այն աղջիկներէն էր ան , որոնց գեղեցկութիւնը խնդրի նիւթ չկրնար ըլլալ , և ճաշակի խտիրներ չըստեղծեր զրեթէ :

Յայտող հասակ մը ունէր . չազանակագոյն առատ մազեր , որ իր ճակտին վերեւը մանրուր թելերէ փնջիկով մը կը բարձրանային և՛ կ'ունակէին՝ պիւրկ մը հիւսուած վեր կը ժողովուէին , ծոծրակին վերայ թափելով գանգուր ցանցաւ թելեր . կապոյտ աչքեր , որոնք անախորժ յստակութիւն մը չունէին , այլ մութ աղօտ վէտով տում մը՝ նման կանաչի զարնող ւրիճներուն որ կը փրփրին փոթորկի ատեն . յետոյ , չազանակագոյն յօնքեր , որոնց շուքը թարթիչներուն շուքին հետ խառնուելով՝ աւելի ոյժ կուտար իր խոնաւ փայլուն նայուածքներուն :

Անգղիէրէն բառեր արտասանելու յարմար չըթուանքներ ունէր Աննա . անուշ ձայն մը , հեռու կեղծուած շեշտերէ . և պարզ ճակատ մը որ մեծ բան մը չէր արտայայտեր :

Աննա , թէեւ իր ծնողքին մէկ հատիկ աղջիկը , բայց անոնց գգուանքին առարկան եղած չէր միայն : Տանը մէջ , գերմանացի վարժուհիի մը հսկողութեանը տակ կրթուելէն ետքը , անգղիական այդ դպրոցը դուրած էր , ուրկէ կը մեկնէր քիչ մը բան սորված , և աւելի լուրջ՝ ըլին բնոյթքին պատճառով՝ բան իր միւս ընկերները :

Եւրոպական դաստիարակութիւնը խառնուելով այդ արեւելցի գեղուհւոյն բնածին ազգութներուն հետ , սիրուն տիպար մը առաջ բերած էր այդ աղջկանը մէջ :

Միշտ խոյս տալով շատ աշխոյժ ընկերուհիներէն զոր թէթեւ կը գտնէր , և երբեք համ չգտնելով վտանգաւոր ընթերցումներու մէջ , Աննա , խարտիշագեղ հայուհին , ամենէն սիրուած , նորէն կը մտնէր իր մօրը հովանւոյն սուկը :

Իր նոր կեանքին առաջին օրերը ուրախութեամբ անցան . մանաւանդ որ զուարթ հիւր մը ունէին , երիտասարդ ազգական մը , երկրորդ կարգի Էմմա մը՝ ինչպէս լաւ գիտեն հնչել աղջիկները , որպէս թէ փառքի մէկ տիտղոս ըլլար ան :

Աննայի հօրը վաճառատան գործակա տարն էր , Մանչէսթրի մէջ հաստատուած , որ քանի մը ամիս անցընելու համար Պօլիս եկած էր և իրենց տունը կը մնար :

* * *

Դժուար բան մը չէ կուահելը թէ ինչպէս Աննային սիրտը տրոփեց այդ երիտասարդին համար , որուն ուրախ զուարթ խօսքերը ժպիտներուն ամենէն անուշները կը փթեցնէին իր տժգոյն այտերուն վրան :

Ընդհանրապէս անգղիէրէն կը խօսակցէին . և կասկածուելու վտիւր չունէին , որովհետեւ երկուքն ալ սիրուած , երկուքն ալ շատ պարկեշտ ճանչցուած էին :

Աննայի պարկեշտութիւնը իրաւ ալ տարակոյս չէր վերցնէր . բայց գուզէին

գալով, «Վ ֆֆեն անխուսափելի էր. տա-
րիներով Անգղիա ապրած, աչքը բացուած,
զուարթաբարոյ երիտասարդի մը քով՝ ու-
րովհետեւ իր վրայ բան մը չէ լուսած՝
մինակ աղջիկ մը ձգելու համար, շատ
բարի ծնողք մը ըլլալու է:

Աննա, առաջին սիրոյ մը բոլոր սըր-
բութեամբը կապուեցաւ անոր. իր կազ-
մուածքին մէջ խանդավառութիւն չիկար,
ուստի ձգեց որ իր սէրը կամաց կամաց
աճի:

Բայց գուցէնը միշտ պահած իր արեւ-
ւելցիկ աւիւնը, զոր աւելի եւս կ'եռանդո-
տէին նիւթապաշտ տենչանքները, կը սըա-
նար, կը սուրար, այնպէս որ, Աննային
քովը, միշտ կրակոտ կարմրած աչքեր ու-
նէր, և լուրջ խօսքերուն վերջ ապ կ'ու-
զէր՝ աւելի անուշ վայելքներու գործածե-
լու համար թանկագին ժամերը, ինչպէս
կ'ըսէր յաճախ իր կուրծքին վրայ սեղմե-
լով Աննան:

Խեղճը, Աննան, կուլար շատ անգամ,
պառկած ատենը:

Անիկա սէրը ասանկ չէր երազած. ա-
նիկա կը կարծէր որ շատ, բայց շատ
սուրբ բան մըն է սէրը:

Կը կարծէր որ համբոյրները՝ մարմնա-
կան վայելքներուն էն վերացականն իսկ՝
կը նմանին այն հպումին, ուրկէ խել մը
փափուկ տերեւներ կը թօնին շուտ մը:

Մինչդեռ իր սիրած անձը պարզ համ-
բոյրներէն ալ անգին անցնիլ կ'ուզէր:

Ձէ, Ժիւլիէթի, Շարլոթի սէրը ասանկ
չէր. ինք այն սիրոյն իտէալն ունէր. ա-
նոր համար ժամերով կուլար, երբ մինակ
մնար իր ննջասենեակին մէջ:

* * *

Իր գուգէնին մեկնման առջի գիշերը
Աննա չքնացաւ գրեթէ:

Ամէն ատենէ աւելի, այն գիշերը ըզ-
գաց որ շատ կը սիրէր զայն. յետոյ, մէ-
կիկ մէկիկ, իր էն առջի տրոփները յիշեց.
յիշեց անոր ալ էն առջի խօսքերը՝ ընթ-
րիքէ մը վերջ, դաշնակին քովը՝ որոնք
իր հոգւոյն թեւեր տուին, և իր սըր-
տին մէջ երջանիկ երազի մը սարսուռնե-
րը պատացուցին:

Ու լացաւ Աննա. դար մը տանջանք
ապրածի նման տխուր էր. քնատի թալ-
կութիւնը իր բնատուր տգիտութեան
հետ խառն՝ հիւանդի տհաճելի գոյն մը
չինած էր իր երեսներուն վրայ, հինցած
մարմարին վրայի կանաչ-դեղին խաւին
պէս:

Բայց ինչ որ իրեն ցաւ էր մանաւանդ,
ան իր պաշտելոյն մեկնումը չէր այն-
քան. իր կարգացած փոքրիկ վէպերուն
մէջի լքուած աղջիկներուն նմանիլը աղ-
ւոր բան մը կը համարէր, և նոյն իսկ
կ'երազէր. ինչ որ իրեն ցաւ կուտար, ա-
նոր մարմնական միտումներն էին որոնց-
մէ ինքը կը նողկար:

Եւ անոր սա կերպ անճաշ միտումնե-
րէն—զոր կը յիշէր աչքերը գոց, ու գլու-
խը թոթուելով, իրրեւ նշան զգուանքի—
կը հանէր ճշմարիտ հետեւութիւն մը թէ
անիկա չէր սիրեր զինքը, այլ անշուշտ
զուարճացած էր հետը, առանց մտածե-
լու որ այր մը պէտք չէ երբեք զուարճա-
նալ աղջկան մը հետ որ տախալին սիրոյ
իտէալն ունի:

Ու հիմա, որ անիկա պիտի մեկնէր,
անփոյթ, արհամարհելով գուցէ զինքը որ
կուտած էր միշտ իր ըզճանքներուն գէմ,
ինքը պիտի մնար միևնոյն տանը մէջ, յու-
սախար ու շատ դժբախտ:

—Օհ, սոսկալի բան է աս, գոչեց Ան-
նա, հեղձուք մը զգալով որ կը ձմէր իր
հոգին. և անկողնին եզրը, գլուխը սաւա-
նին յենած, առատ արցունք թափեց՝ զըս-
պուած հեծկլտուքի մը մէջ, մինչեւ որ
իր մորմոքին այս յորդումէն վերջ՝ յոգ-
նած արտեւանունքները գոցեցին իր աղ-
ւոր, իր հրեշտակի աչուրները:

Երբոր արթնցաւ, արեւը, երջանիկ
ցոլացմունքով մը, կ'սղոզէր իր հեծկլը-
տանքով ու զառնութեամբ լցուած սեն-
եակը:

* * *

Այսպէս, շատ կարճ վայելք մը եղաւ
իր գուգէնին ներկայութիւնը. և անոր
մեկնումէն վերջը, Աննա, արդէն լուռ ու
հանդարտ աղջիկ մը, տխուր եղաւ բոլորո-
վին:

իր խորոխտ բնաւորութիւնը ասկէ աւելի մեծ վէրք մը չէր կրնար ստանալ. որովհետեւ կը սիրէր մէկը որ պահ մը սիրել փորձեց զինքը՝ իբրեւ կին մը որ իւրաւունք կուտայ յուսալու:

Ուրեմն ինչի՞ պիտի ծառայէր սիրտը, զոր ինքը մաքուր անվթար պահելու երազն ունէր, քանի որ այլը զայն չպիտի փնտռէ, կամ եթէ նոյն իսկ փնտռելու ըլլայ՝ աս պատրուակ մը պիտի ըլլայ, կամուրջ մը՝ անցնելու համար տենչերու եզրը ուր գոհացումը կայ, քիչ կամ աւելի:

Այս մտածումները պահ մը մոռցնել կուտային իր վիշտը. բայց ըստէն մը աւելի չէր տեսեր իր գուլէնին դէմ զգացած ցըրտութիւնը, և, կամաց կամաց, նորէն կը փայփայէր կուրծքին տակը իր անուշ սէրը:

Աննային մեծերը անոր ծանրաբարոյ յուսեանք կը վերագրէին այդ մտախնդ վիճակը. չէին գիտեր ինչ որ կ'անցնէր անոր վճիռ հոգւոյն մէջ. աչքերը չեն տեսնար ինչ որ կան յատակը լճակին որ, ան ալ, վճիռ երես ունի:

Ծնողքները, յաճախ, չեն հետեւիր իրենց զաւակներուն պզտիկ փոփոխումներուն, որ իրենաւ մեծ տագնապներէ կուգան. և, իրենց զաւակներէն առաջ, իրենք իսկ կը ջանան գտնել այդ փոփոխումներուն արդարացնող մէկ պատրուակը, իրար համոզելու համար, իրենց խըղճին խայթը չարթնցնելու համար գոյցես:

Բայց Աննային ծնողքը թէ որ գիտնար իսկ անոր ցաւը, օգուտ մը պիտի չունենար աս. որովհետեւ Աննա երբեք մտքէն չէր անցընէր այլեւս անկէ սիրուիլ՝ զայն սիրելովը հանգերձ: Ինքը, առջի օրը, կարծեց որ ան իրեն պէս կ'ըմբռնէր սէրը, ու չուտ մը կապուեցաւ անոր, անհասկնալի մաքուր սէրով մը. մինչդեռ գուլէնը երբ տեսաւ որ Աննա իրեն պէս չհասկնար սէրը, դեռ զայն չսիրած իսկ, հեռացաւ գնաց իրմէն. ան խեղացի էր. անշուշտ ան իրաւունք ունէր:

* * *

Երեք տարիներ անցան, երկար շարք

մը անհամ օրերու, այն օրէն ի վեր որ իր սիրտը առաջին անգամ ըլլալով բաբախեց սիրոյ երազին տակ: Սկիզբները, տանջանքի թուական մը եղաւ իրեն համար:

Բայց իր հաստատ դաստիարակութեամբ մը սնած կազմուածքին շնորհիւ, իր սիրազեղ զգացումներուն յաղթեցին դառն մտածումները զոր ծնաւ յուսախաբութիւնը:

Պակաս պիտի խորհի, անկարելի բան է որ հակառակն ըսեն, ան որ չէ կրած յուսախաբութիւնը, ուրկէ որ գայ աս, մանաւանդ երբոր սէրէն վերջը գայ:

Աննա, որ աւելի անգոյններէն գրեթէ կարգար, անոնց մէջի սիրոյ ուսումնասիրութեանց հետաքրքիր եղաւ. իր պզտիկ ուղեղը շատ յոգնեցուց, իր գատնումը պէտք եղածէն աւելի մոլորեցուց:

Եւ, քիչ քիչ, սա գաղափարին յանգեցաւ որ կինը, երբոր վայելքի կեանքը չէ ապրած տակաւին, կը սիրէ՝ մի միայն սիրոյ իտէալէն յափշտակուած, հեռուն ձգելով, շտեմնելով կանխաւ մարմնի հաճոյքները, որոնք, շատ շատ, հետեւանքը կրնան ըլլալ բուռն և երկարատեւ սիրոյ մը, մինչդեռ այլը, նոյն իսկ երբ վայելքի կեանքը չէ ապրած տակաւին, յաճախ կը սիրէ ան հաճոյքներէն չլացած՝ գրեթէ բնագոյրէն, նկատելով՝ սէրը մէկ պայմանագրութիւն որ անոնց տիրանալու իրաւունքը կուտայ:

Այս, և ասոր նման մտածումներէ պաշարուելով տակաւ, Աննա, կրցածին չափ միտքը կը դնէր հեռու փախչիլ այրերէն: Մնաց որ իրենք շատ քաշուած կ'ապրէին. և իր եղբայրը, իրմէն քիչ մը մեծ և իրեն շատ կերպով նման, հազիւ երբեմն երբեմն տուն կը հրաւիրէր իր մէկ քանի բարեկամները:

* * *

Այս երեք տարիներէն վերջը, Աննա, որ կրկին գտած էր իր հրապոյրներուն այն մասը զոր պաշտնի պահուած կսկիծը հիւժեր էր, առջի չափ շատ չէր մտածեր իր նախկին սիրոյն վրայ. անկէ ինչ որ մնացած էր, յիշատակն էր, բայց երազի պէս օրօրող յիշատակ մը՝ որ մերթ ընդ

մերթ կը թաղէր զինքը տարտամութեան մը մէջ՝ ուր, հեռուն, կը տեսնար իր երջանկութիւնը վաղախոյս, ինչպէս աչքը կը տեսնէ լոյսին պլպլուքը մշուշի մը ոլորներուն մէջը:

Բայց իր գորովով լեցուն սիրտը յիշատակի մը մէջ միայն ապրելու համար շինուած սիրտ մը չէր:

Հակառակ իր սկզբունքներուն, որ զինքն ալ կը շփոթէին երբեմն, անոնցմէ աւելի զօրաւոր պէտք մը կը զգար թափելու իր զգայնութիւնը սրտի մը մէջ որ հասկնար զինք, որ իրմով լեցուելու համար իսպառ պարագայ բլար:

Աննա, հակուած այդ պէտքին վրայ խորհեցաւ. ու, միջոց մը, օրուեցաւ այս գաղափարովը, ձգելով որ անցեալին յիշատակը քիչ մը քննանայ, ու զգուշացնելով անոր ջնքերը՝ յոյսին առկայծումները՝ որք սկսան հեշտացնել իր այնքան դաժան, իր այնքան տխուր կենցաղը:

Եւ իր այդ գաղափարին արդարացումները գտնելէն ետքը, Աննա ուշադրութիւնը մոթովը կը դարձնէր իր ծանօթներուն վրան. բայց ոչ մէկուն համար կը զգար համակրութեան պէս բան մը, որովհետեւ այն ժամանակ ալ կը հաշուէր որ ամենքը քիչ թէ շատ իրարու կը նմանին:

Այս բանը շատ գէշ կուգար իրեն. իր առաջին ցաւին մանուածապատներուն մէջ գեռ խոտորած կը տեսնէր իր անձը. կը կարծէր որ ալ պիտի չկրնայ սիրել, կը կարծէր որ իր գաղտնի, արծարծուն յոյզերը՝ որոնք մէկու մը չէին արտայայտուած իր բոլոր կեանքին մէջ՝ չպիտի կրնար գուրգուրանքի ձեւերով սրտակցի մը պարզել:

Երկար ատեն վարանեցաւ:

Մինչեւ որ, բաւական ատեն ետքը, այն երիտասարդը, իր եղբօր մէկ բարեկամը, որ երբեմն իրենց տունը կուգար, սկսաւ առջի պէս անտարբեր չընել զինքը:

Անոր մանր հաճոյակատարութիւնները, զոր չէր նշմարած ցորքան կրկին սիրելու հարկը չէր զգացած, ալ սկսան շահալընդրել Աննան:

Սիրուն երիտասարդ մըն էր Արամ, հա-

զիւ քսանը չորս տարեկան, որ Աննային եղբօրը հետ միեւնոյն գիւանատան մէջ պաշտօնակից էր:

Թուիս դէմք մը ունէր, բաւական նիհար. սեւ աչքեր որ կը փայլէին ինչպէս ածուխի կտոր մը որուն վրայ կ'իյնայ արեւուն էն տաք մէկ ճառագայթը. սրածայր անօր մօրուք մը. վեր վարժուած մազեր, զոր կը ծածկէր ցած և լայն ֆէս մը՝ միշտ գլխուն վրայ գամուած. ու ամբողջ դէմքին վրայ բան մը որ իրեն զգացումի տղայ մը ըլլալը կ'ըսէր Աննային:

Աննա, որ թերեւս այդ թուիս սիւպարին վրայ խորհած էր երբեմն, ցնցում մը ունեցաւ. և, իրիկուն մը, զարմացաւ որ մինչեւ այն րոպէն բան մը չէր զգացած այդ ազուր անձին համար:

Զիւնի պէս ճերմակ թաթերովը, որոնց ծայրերուն վրայ կարծես վարդի թերթիկներ փակցուած էին, վեր նետեց իր մետաքս մազերը որոնք վար սահէր էին, ու գլուխը իր երկու ձեռքերուն մէջ սկզբնաւոր, մինչեւ ծունգերը ծակցուց զայն:

Շատ անուշ երազանքի մը մէջ մտուելով հետզհետէ, հեշտութեան պէս բան մը զգաց՝ որ կը քայքայէր իր հոգին, որ կը փսփոսէր զայն, կամաց կամաց, ինչպէս կարծես թէ կը փսփոսէր երեւոյթ որուն գուրգուրանքը կը գողգողան ամառ ատեն արեւուն ճաճանչներուն մէջը:

* *

Այդ օրէն սկսեալ Աննա բանի մը ըստպատելու երեւոյթն ունէր:

Ետին նայող, անցեալին մէջ բան մը սրբապաշտ աչքերուն դառն մեղմանող թիւնը չունէին այլ ևս իր աշուրները, այլ կը շողային անոնք՝ դէպ առաջ, քիչ մը անդին, ըզձացուած բանի մը հասնելու գեղեցիկ յոյսին յառող արըշիւ աչքերուն պէս:

Գիշեր մը, պատուհանին առջեւը նըստած, անձկութեամբ փողոցը կը դիտէր:

Կապոյտ պլուզ մը հագած էր. գրեթէ որ շէնէ նուրբ շղարչ մը կը ծածկէր իր թեւերը, և հետզհետէ լայնալոյզ իր ուսերուն վրայ կը յանգէր բարձրանիստ ուռեցուածքով մը, որուն ճիշդ քովը, դէպ

ի ծոծրակը, կապոյտ ժապաւեններ կը ժողվուէին, փնջիկ մը ձեւացնելով. կուրծքին վրայ սլաքի եռանկիւն մը բացած էր, որ կը յիշեցնէր կապոյտ երկնքի վերայ ձիւնէ ամպի մը ծուէնը. և ձերմակ լայն գօտի մը կը գրկէր իր փոքր լանջը, կրկար ծայրերը աջ կողէն վար ձգելով, բալի գոյն սեղմուած շրջադիտութի մը վրայ:

Աննա յարկարծ տեղէն ընդոտ ելաւ ու, այլալեւ, հայելիին մէջ գազտնի մը նայելէն վերջը, սանգիւն գլուխը վազեց:

Արամն էր, որ իր բարեկամին տուած խոստումին վրայ հաստատուելով էր նոյն գիշերը մէկտեղ անցընելու:

Աննա կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով այնքան կը յուզուէր, որպէս թէ բանէ մը աստիկ վախճան ըլլար՝ այնքան կը դանդաղէր. և առաջին անգամ ըլլալով իր սիրտը այնքան յարատեւ ու զօրաւոր կ'եղնէր՝ սիրելու մարմնացէն յափըտակուած, ու սիրուելու անուրջէն արբեցած:

* * *

Արամի աչքէն, ալ այս անգամ, չվրիպեցաւ տփոյն օրիորդին յեղակարծ փոփոխումը. ծիծաղ մը ունեցաւ՝ զոր յայտնի չընելու համար պատէն կախուած պատկերի մը քով կեցաւ, զիտելու կեղծիքով. բայց այս ծիծաղը հեղինակեան համար չէր, ոչ ալ պարզի մը կանխատեսած յաջողութեանը համար էր. այլ յաղթական մարդու մը ծիծաղն էր այն, որուն մէջ Արամ կարծես կը փորձէր ուրանալ իր երջանկութիւնը, զոր սակայն՝ ցորճան զապուէր իրեն՝ փառք մը պիտի համարէր յաւէտ:

Աննա բարձրագիւր կանթեղին խոշոր լուսամտիփին տակը նստած, հիանալի էր:

Իր նոր պէրանքը... բայց ո՞ր կինը չունի զայն. միթէ անկա կնոջ հրապոյրներուն վայելցնող շրջանակը չէ՞. կրնա՞ր զրթել այն յաւելուած փայլը զոր ոսկեղրուադ ճախ շրջանակ մը կուտայ էն գեղեցիկ նկարին:

Արամ գազտնի նայուածներով անոր չարժամներուն կը հետեւէր. և զարմա-

ցումէն աւելի, տարօրինակ բերկրանք մը կը լափէր զինքը, երբ, քիչ քիչ, աւելի կը համոզուէր թէ Աննա, նոյն գիշերը, չէր առջի լռին ու քաշուած աղջիկը:

Ու եղաւ վայրկեան մը, որ Աննա այնքան խորհրդաւոր գտաւ Արամին աչքերը — որ խօսած ատենը կը մարմնէին՝ երբեմն կրակէ նայուածքներ թափելով, երբեմն ալ իր թարթիչներուն մէջէն հալած նայուածքներ մաղելով — որ, ինքը, անտարբեր ու լռին աղջիկը, խոշոր լուսամտիփին տակը նստած, Արամին վրայ սեւեռեց իր ակնարկը առանց թթութիւնի, և հաղիւ սթափեցաւ այդ երջանիկ սեւեռումէն որ զինքն այնքան կը մատնէր:

Իսկ Արամ, այդ սեւեռումին տակ սարսուռներու հնչուակէտ լողանքներով, ակնաջ զրաւ իր տրոփներուն. կարծեց թէ անոնք կը խաբեն զինքը. չուզեց հաւտալ որ այն համակրութիւնը զոր առջի օրէն իսկ ունեցած էր Աննային համար, յանկարծ, մէկ գիշերուան մէջ, սիրոյ կրնայ փոխուիլ:

Ու, անկիւն մը, թիկնաթուռի մը մէջ, սկսաւ խոկալ, մեքենաբար դարձնելով լուսանկարներու ալպոմ մը, երբ աչքին զարկաւ Աննային լուսանկարը:

Իսկայն, անոր հետ խօսք մը փոխանակելու պէտքն իմացաւ իր մէջ. և երբ գլուխը վեր վերցուց զայն փնտրելու համար, տեսաւ որ ան իրեն կը մօտենար ժպտունակ. տեղէն ելաւ շուտ մը, իր աթոռը հրամցուց անոր, ու քովը նստաւ, ծնրազիւր ազօթողի մը հիացումով լուսաւորուած:

Իր ցուցամատը աւազմին այն էջին մէջտեղն էր ուր կար Աննայի լուսանկարը. երբոր նստան, բացաւ այն էջը, և պահ մը, ակնապիշ, պատկերը դիտելէն վերջը, ըսաւ մեղմիւ, մազնիսուած նայուածքը միշտ չբաժնեւոր անոր վրայէն:

— Օրիորդ, գիտէ՞ք ինչ կը խորհիմ. կը խորհիմ որ սխալ մը ըրած էք ձեր գէմքին լուսանկարը հանել տալով, ըստ որում արուեստը չէ կարող բացարձակ գեղեցիկը արտայայտել:

— Բայց ի՞նչ կ'ըսէք, միմիջեց Աննա, որ գէպ անոր ծռած, լուսանկարներուն

կը նայէր. ու, յետոյ, իր պլուզին ծալ-
քերուն հետ խաղալով,

—Մինչդեռ ես լաւ համողութեամբ որ
լուսանկարս կը գերազանցէ բնականը :

—Օ՛հ, չէ՛, գոչեց Արամ, սրանեղ,
աչքը բաժնելով վերջապէս աւելումին վը-
րայէն ու զայն Աննային հրաշագեղ աչ-
ուրներուն վրան սեւեռելով, հաւատա-
ցէք որ չէ՛. հաւատացէք որ այդ աչուը-
ներուն վրայ լոյսն անգամ պիտի նախան-
ծի իր առողջ մաքուր ցոլացումը ցայտե-
լաւ այն պահուն՝ որ արուեստաւորը կա-
փարէջը կը զատէ լուսանկար գործիքին
պարանոցէն :

* * *

Արահին խորը, Աննային հայրը և մայ-
րը պէզիկ կը խաղային :

Իսկ եղբայրը, ոտքի վրայ կեցած, կան-
թեղին մօտը, լրագրի մը հետաքրքրաշարժ
մէկ սիւնակը կը կարգար հապճեպով : Ըն-
թեցումն աւարտելէն ետքը, սիրուն զոյ-
գին մօտեցաւ, և, թեւն Արամին ուսին
վրայ կրթնցուցած, հետեւեցաւ աւելումին
դարձէջքին, անձնիւր լուսանկարին վրայ
զուարթ խօսք մը գլորցնելով :

Երբ աւելումը գոցեցին, Աննա, երջա-
նիկ, վերացած, ելաւ պատուհանին քովը
գնաց, մինակ թողնով երկու բարեկամ-
ները :

Ապրիլի գեղեցիկ գիշեր մըն էր. լու-
սինը նոր կ'ենէր բլրակին ետեւէն, կար-
միր ու խոշոր, գորտերը իրենց միօրինակ
ու տիրադրեցիկ խմբերով կը ճուրջտային
մօտակայ աւազանի մը մէջ. և անուշ հով
մը սենեակէն ներս կը բերէր նորածիլ
զաւարներուն ու մարգագետիններուն վայ-
րի բուրմունքը :

Սիրոյ գիշեր մը. երջանիկներուն հա-
մար գեղեցկացած գիշեր մըն էր Ապրիլի
այդ հանգարտ գիշերը :

(Շարանակոմէանը յաջորդ ընունք)

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ՄԵԶԲԻՍ ԿԱՄԱՐԸ

ՓԱՐԻՋԵԱՆ ՅԵՏԱՏԱԿՆԵՐ

Կիրակի ըլլալը պատեհ առիթ սեպե-
լով, այսօր առաւօտէն հետէ վէրսայի
պալատն ու յարակից պարտէզը վեր վար
սլքած, ոտքերուս ջուր իջած, խոնջա-
բեկ կը վերադառնամ՝ Փարիզ՝ իրիկուան
ժամը 7ին և կը մտադրեմ քաջաւիլ բնա-
կարանս հանգստանալու համար քիչ մը :

Իայց ի՞նչ է այս. սենեակս տանող
նրբուղիէն կը տեսնեմ թէ դրանս առջեւ
կայնած է կին մը... տարօրինակ բան.
անչուշտ սխալ մը կայ գործին մէջ. կը
մօտենամ իրեն :

—Ներեցէք, պարոն, կ'ըսէ ինծի, զո՞ւր
էք այս սենեկին տէրը. զո՞ւր էք պարոն
Ոստանիկը :

—Ես եմ, օրիորդ. պիտի թոյլատրէք
ինձ հիանալ ձեր գեղեցիկ և յստակ ձայ-
նին վրայ. և կը սիրեմ ատանկ ջինջ ու
լեցուն ձայները... այսու հանգերձ, ուր-
կէ՞ ուր այդ ձայները՝ իմ ականջիս մէջ
եթէ կը հաճիր... :

Փոքրիկ բացատրութիւն մը, և ահա
կը հասկնամ թէ Պօլսեցի ազգակից մը,
չարածճի հայ երիտասարդ մը, ուղեւով
խաղ խաղալ ինձ ու փորձութեան հետ ի-
րապէս քով քովի բերել իմ մաքրակոն
փրկափայտութիւնս, իմ հասցէս և անունս
զերէն է թուղթի մը վրայ ու յանձնէր է
Հուլիին, —այս է իմ հիւրին անունը, —կամ
գէթ իր այցաքարտին վրայ տեսնուած տ-
նունը :

Եթէ Մալէի խմբագրատունը քմահաճօյք
չունենար «Ոստանիկ» գիմակը անցունել
իմ երեսիս, սոյն անակնկալ այցելութեան
հետեւանքը անմիջապէս պիտի հասկնայիք
ու այդպէս հասկնալով որչա՞փ պիտի
սխալէիք զուրք, ո՞վ բարոյական և անբա-
րոյական եղբարք ի զրականութիւն :

* * *

Յանդգնութեան, նա՛եւ անխոհեմու-

թեան առաջին քայլը կ'առնեմ առաջարկելով Լուիզին պատուել զիս սենեկին մէջ սեղանակից ըլլալով ինձ. իր ցոյց տուած յօժարակամութիւնը արգահատանքս կը շարժէ. կը դուռնակեմ ամեն բան. կը բանամ սենեակս ու ներս հրամցնելով կը գոցեմ դուռս:

Ձեռնոցներն ու զլխարկը նետել բազմոցիս վրայ, երթալ ուղղակի շքեհին և լամպաները վառել ու գալ նստիլ քովս, Լուիզին բրած գործերն են ասոնք. կ'արգիլեմ զինքը ուրիշ serviceներէ, մատուցել կը կոխեմ ելեքտրական կոճակը ու կանչուող սպասաւորին. կ'ապաւրեմ երկու հոգեւոյ ուտելիք, table d'hôte:

Այցելուհւոյս սեփ սեւ ընքուիններն ու խոշոր թարթիչները ուշադրութիւնս կը հրաւրեն նախապէս. ես, իմ վայրենի ճաշակիս մէջ պատրուած կ'զգամ ինքզինքս. հակառակեան պէս, կամ թէ ըսենք ներկի պէս բան մը կը տեսնեմ մագիլու այս ոտիկ և այդ սեւ գոյներուն մէջ: Գէ՞մբը. լամպաներուն լոյսին տակ՝ դունատ և սիրուն հարկաւ ու անպատճառ շղարեալ. ծագկաւետ չըջաղկեսո՞մբ՝ ըստ կարի փակցուած մարմնոյն եւ հրեշտակի թեւերով ուտերէն վեր. . . ինձ չէք կրնար հաւատացնել թէ անկեղծ է այդ ուռուցիկ ծոցը. քանզի իմ ականարկներն իջած են ճշգրտէս մէջքին վրայ, մէջք մը այնչափ բարակ որ բացարձակ կը ստէ գիրգ կուրծքը Լուիզին:

Ձգիտեմ ինչո՞ւ այս վայրկենիս միտքս կուգայ Ալօն, այսինքն Ալիքսանը, Պոլսոյ մաքսատան ձողաբարձներէն ազգակից մը, հսկայ հասակով, հերքիւլեան ուժով. իրաւ որ Ալօյին կոշիկները ճամբարիս «անպաշտօն» են՝ մանաւանդ սա/փարիզուհեաց աչքին. . . արի՛, իմ Ալօն, դու բնութեան հէշտ և ուռնացեալ դաւակը, արի՛ և երկու ցուցամատերդ ու երկու բթամատերդ դէմ առ դէմ կ'պցուր իրարու. օ՛, չատ ու չատ լայն չըջանակ մըն է այդ՝ չափելու, հպելով չըջապատելու, մի և նոյն բանն է ըսել գրկելու համար՝ Լուիզին մէջքը. . . Լուիզ կրնայ, իմ բարեկիրտ Ալօս, քու մատերէդ կախուիլ իբրեւ հաստատուն առանցքէ մը, և մատե-

րուդ յօրինած չըջանակին մէջէն իր ամբողջ մարմինն անցունել և ինքն իր վրայ դառնալ թառալիլ արագ արագ այնպէս, որ ապշիս դարմանաս. . . անանկ թեթեւ ու ճապուկ, անանկ լպղտրուկ որ դու կ'ըսես միս ու ոսկոր չունին ասոնք: Սագանի ձագեր են այս փարիզուհիները, և քու գործդ չէ անոնց մէջքը շօշափել, իմ քաջ Ալօս. դու, գնա գտիլ քու համեմատութիւններդ. դու գնա գրկել քու Շահանիդ, քու Արմաղանիդ, քու Շուշանիդ մէջքը, ու Լուիզը ձգէ մեզ. մե՛նք, տնեմ ու թառամած, մենք՝ վատած ու սմբած, մենք փափկասիրաբար կը հասկընանք իրարու լեզուէ, իրարու մէջքէ:

Հապա ե՛ս որ եկած եմ Փարիզ դարմանուելու համար. ի՞նչ բան ունիմ ես քու քովդ. կամ դո՞ւ ինչ բան ունիս իմ սենեկիս մէջ, դու, օտար աղջիկ. . . ի՞նչ բառերով բացատրեմ քեզ թէ քու նենգաւոր թարթիչներդ, ու սուղասկող նայուածքդ, ու գրաւիչ դէմքդ չի կրնար հըրապուրել, հմայքներու ենթարկել իմ միտքս: Գուհ և չնորհալի «այո՛», պարոններդ բնաւ երաշխաւորութիւն մը չեն թէ դուն ընկեցիկ մը, չար ու խաբեբայ, գինով ու կողոպտող խէնեղ մը չես. կամ թէ չես ցանկութենէ հալով ըսպառուդ այն Եւայի աղջիկներէն որք կը վիտան Փարիզու կողմնակի փողոցներուն մէջ, և ուր, անցորդներու աչքին առջեւ, արձակ համարձակ, զոյգ զոյգ երկնցած երկաթեայ նստարաններուն վրայ, մարմնամարդութիւն կ'ընեն:

Գէշին գէշն ևս դու, Լուիզ, եթէ այս երկու դասակարգին յատկութիւնները միջուցած ես վրադ. բայց, կանխակալ կարծիքներով չտանջենք մեր հոգին. գիտենք՝ դատելէ առաջ:

Ու կը զիտեմ:

* * *

Ուղէք չուղէք ես անքաղաքավար մը պիտի ըլլամ, բացէ ի բաց ըսելով ձեզ թէ այս բամբեղը առաւօտէն ի վեր բան դրած չէ բերանը, հակառակ իր արգուզարդին, որոյ վրայ ակներեւ են վարսայարգարին ինամբները. այս պաճուճանքին ու այս

անօթութեան մէկտեղելը չի զարմացներ զիս՝ մասնաւանդ իգական սեռին վրայ տեսնելով. ո՞չ ապաքէն Պոլոյ մէջ կը ճանչնանք հայ երիտասարդներ ալ, որք, փողկապի տանդ մը, բարակ պատթօն մը, և այլ ուրիշ անպէտ բան մը գնելու համար գրպանը ունեցածնին կը վճարեն, անօթի մնալը աչքերնին առնելով: Կարկեցնենք, եթէ կը փափագիք, այս չարախօս լեզուն և շարունակենք գիտել մեր գեղանի բարիգուհին, որ հացի չերտէն դանակով կը կտրէ իւրաքանչիւր պատառը, կը կտցէ պատառին ծայրը ու գրեթէ փշրանք մը կը ծամէ բերնին մէջ՝ չը գիտեմ իբրեւ պատառ թէ համեմ. սա չափ միայն գիտեմ որ մինչդեռ մենք սեղանին վրայ հացը շատ, կերակուրները բաւական և ըմպելիքը խիստ քիչ կը խմենք սովորաբար, մեր բարիգուհին բոլորովին հակառակ կերպով կը վարուի. մեր հինգ պատառն է անոր ամբողջ հացային պէտքը. երկու արեւելքցի կնոջ չափ միս կ'ուտէ բարիգուհին ու չորս հայ մարդու խմելիք գինին է որ կը կաղմէ եղեր Լուիզին ոգելից սնունդը. գաւաթներն իրար կը յաջորդեն և զուարթ կարմրութիւն մը կը բերեն Լուիզի գէմքին վրայ առ տակաւ. արեւելքցի մը գէմն է նստած, թող ուզածին չափ ուտէ ու խմէ Լուիզը, անուշներ ըլլայ... քիչ մը քիչ միտքաւորանք է Վանայ գիւղերէն և Կոդի մը համար ըսել թէ «Փարիզի մէջ Լուիզը յազեցուցի կուռ ու կուշտ», միւս կողմանէ, Լուիզին համար ալ փոխադարձ սփոփանք մը չէ՞, իր պառաւութեան ատեն, և աւելի գէշը, ուրիշի մը քովը եղած ատեն, նայելով իր անցեալ կեանքին, տեսնել հոն ի մէջ այլոց, խեղճ միւսիւ Ոստանիկ մը՝ փաթկուած, սթալուած, կողպատուած, պարզապէս:

Իմ մեծարած ընթերցս աւարտելով, Լուիզ ոտքի կ'ելլէ՝ գոհունակ, երջանիկ, փողփողուն աչքերով. անհասկնալի երգ մը ի բերան, ինքնագլուխ կ'երթայ բանալ իմ ներքնասենեկիս դուռը, ու հոն ձեռքերը լուալով սրբելով՝ կուգայ ըսել ինձ թէ շնորհակալ է սեղանէս, և թէ ո՛ւր պիտի տանիմ գինքը զուարճա-

նալու համար. ահաւասիկ փորձանքը. յոգնած դադրած եմ ես. ո՛ւր կրնամ երթալ. կ'առաջարկեմ իրեն ինձ հետ իջնել պանդոկին սրահը ու դաշնակի դարնել:

—Երաժշտութենէ չէ՞ք տխրոթիր, օրիորդ:

—Կ'ախորժիմ. բայց պարելը կը սիրեմ. դուք կը պարէ՞ք, պարոն. սա սենեկին մէջ, գոնէ մարտդութեան համար, բօլբա մը չի դառնա՞նք քեզի հետ:

—Ես աւելի աղէկ գիտեմ պարել վայնաբէն, ծափաղը:

—Սանկ փոքրիկ լանսլայէ մը, վալս մը:

—Սանկ Խաչնէի պէս բան մը, Խաչնէ մը, հէ՞, ի՞նչ կ'ըսէք:

—Գեղեցիկ է Խաչնէդ. կ'երեւայ թէ ձեզ յատուկ խաղերէն է այդ. լա՛ւ, կ'ընդունիմ խընքանէն. սորվեցուր ինձի քիչ մը, բռնէ մէջքէս, գրկէ, խաղցուր զիս:

Եթէ շարունակէինք չափաւրատել այսպէս, կարծեմ թէ վերջ ի վերջոյ սքանչելի պար մըն ալ մենք պիտի հնարէինք. սակայն ափսոս որ ամօթխած բնաւորութիւնս յաղթող ելաւ այս պայքարէն ու պարասէլք զրկուած են այսօրուան օրս վալսախառն Խաչնէյէ մը, կամ վայնաբէնով շաղախեալ բօլբայէ մը:

* * *

Եւ համաձայնելով նուագածիկ սրճարան մը երթալու, նախապոչութեան համար կը հանեմ մէջքիս կամարը ուր ամփոփուած է ամբողջ ունեցածս. կամարս կը տանիմ տեղաւորել ճերմակեղէնի սընատուկիս մէջ, կը կրպեմ սնտուկն ու բաշալին առնելով պանդոկին դռնէն կը հեծնենք կառք մը Լուիզին հետ և կը քշենք գէպ ի պարտէզի Կառքի Կառքի, կը մտնենք ելեքարակաւ լոյսերով ողողեալ սրճարանէ մը ներս՝ որուն նմանը չի գրտնուիր ի Պոլիս և ուր, ամբողջ ամիսներն ու յենարանք, ահապին պէ՛տէն, սիւներն ու ամեն ինչ շինուած են ծառի կեղեւներէ. անսաղարթ անտառ մը, մէկ խօսքով:

Ամպիոնի պէս բարձր տեղ մը կայ. հոն ուղղները կը պարեն. բայց անկարելի է

ինձ թողուլ Լուիզը որ պարէ. բնագոյական նախանձը կը կրծէ սիրտս. կը յանձնարարեմ իրեն պարել... նստած տեղը. միթէ ցատկըտեղէն մէջ կը կայանայ պարելը. միայն թէ ի՞նչպէս ոտքի և ձեռքի թփրտութիւնով եւեթ հետեւեցաւ պարին 2—3 ժամ շարունակ. թէ ի՞նչպէս զիս ումպետ ծախքերու չենթարկեց ու կրցաւ գոհացնել զիս իր համեստ վարմունքովը, —ասի հոգեբանական անլուծելի հարց մըն է եղած ինձ համար, մինչև այսօր:

Պիտի հրաժարիմ աստ գրելէ այն ամեն վախկոտ մտածումները որք յուզուեցան զխուս մէջ՝ երբ դառնալով սենեակըս, միամիտակ մնացի Լուիզին հետ... Միտքս ալ սիրտս ալ ի նպաստ Լուիզին վճիռ տուին և ուղեցի այցելուհիս պատուել՝ Պոլսէն տարուած գեղեցիկ գիշերազգեստ մը հրամցնելով իրեն:

Անտուկէս կը հանեմ գիշերազգեստը ու կը յանձնեմ Լուիզին:

—Ինձի նայէ, պարոն, զրամիզ կաշեայ խողովակը, նայէ՛, հո՛ս նայէ:

Տէ՛ր Աստուած, ահա մէջքիս կամարը, իմ ամբողջ հարստութիւնս, պատիւս, առածիզ կախումս Լուիզին ձեռքն ի վար... երբէք երկաթը այնչափ արագ քաշուած չէ մազնիսէն, որչափ ես, խելակորոյս, կը սրանամ Լուիզին վրայ, ձեռքէն կը յախտակեմ կամարս, զոր նոյն իսկ Լուիզէն դաղոտի պահելու մտօք հանած էի մէջքէս և զոր անտուկին մէջ առխարխափ, գիշերազգեստին ծալքերուն մէջն եմ սահեցուցած հապճեպով:

Ի՛նչ անողք հեգնութիւն, ի՛նչ սոսկալի հակապատկեր մըն է այս տեսէ՛ք, սա ինքնավաճառ աղջիկը, երկուսն անօթին, սա Լուիզը, որ վաղը նորէն անօթի պիտի մնայ դուցէ, ահա առանց վարանելու տիրոջը կը յանձնէ իր ձեռքն ինկած կամարը... մինչդեռ կրնար ձայն ձուռն չհանել, մեկնիլ սենեկէս, մեկնիլ Փարիզէն ու Թրանսայէն և տիրանալ կամարիս. կամար մը որուն մէջ եթէ ոսկի կայ, խնդրեմ չիտակը ըսէք, կը կարծէք թէ անարատ գոհար մը չի փայլիր, առաքինութեան բարոյականը չէ պահուրտած սա թայ սպունդէ աչքերուն մէջ, սա աղիճաբարոյ Լուիզին լանջին տակ:

ՈՍՏԱՆԻԿ

ԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԵՐ

ՄԵՐ ԳՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ

Հոգարարծութիւններ ու խնամակալութիւններ իրենց պարտականութիւնը կատարած կը կարծեն, երբ աշխատեցող շարքեր դուռած կը տեսնեն ծրագիրներու, քննութեանց աստիճանացոյցերու վրայ. ծնողք ու պաշտպանք՝ վստահ ազգ. կրթական մարմնոց խղճահարութեանը՝ կը զոհանան: Ո՞վ հարցուցած է թէ գիտական դասեր ի՞նչպէս կը դասախօսուին:

Մտիկ ըրէք:

Ուսուցիչն ուսանողը կը խաբէ, աշակերտն ալ վարժապետը. ազգն իր սուղ զրամէն կը տուժէ, պատանեկութիւնը՝ իր թանկագին ժամանակէն: Բացատրեմք եթէ երբէք բացառութիւններ կան, զոր չկենալ կը կարծեմ, կը յարգեմ. մնացեալ գիտութեանց դասատուներ լոկ ֆըրանսերէն հասկցողներ են՝ որք չնորհիւ կրակատար ինքնօգնութեան մը կրցեր են անդամ մը ինքզինքնին նետել հրապարակին վրայ, ու հանդատանալ. ա՛լ ի՞նչ պէտք աշխատութեան, հացի խնդիրն ապահովուած է, կ'ընտրեն համալսարաններու դասադրքերն, անոնց մէթոտով կ'երազեն դասախօսել: Իրենց ընտրած հեղինակներն ու հեղինակութիւններն են՝ Կանօնի կամ Ժամէնի բնագիտութիւնը, Վիւրձի կամ Դոուսոնի տարրաբանութիւնը, Կիւսդալ Պօնիէի կամ Միլըն էտվարսի բնական պատմութիւնը. բարձր են ու շատ բարձր աշակերտին՝ միանգամայն վարժապետին համար, ոչ միայն թաղային վարժարանաց՝ հապա՛նաւ մեր ունեցած հագիւ մէկ երկու երկրորդական՝ վարժարանաց համար:

Ի՛նչուք թէ բարձր չըլլային՝ այդ դասադրքերն. դարձեալ չեն համապատասխաներ մեր դաստիարակութեան պահանջմանց. որովհետեւ ո՞վ կրնայ ուրանալ թէ՛ Եւրոպական դասադրքեր չեն պատրաստուած իրենց սղայոց համար, որք կը

խօսին միայն իրենց երկրի հողին ու հանքին, բոյսերուն ու կենդանեաց վրայ. ինչո՞ւ մենք չուսուցանենք հողն ու ջուրը, բոյսն ու կենդանին, քարն ու հանքը որոց վրայ կը ծնինք, որոնցմով կը սնինք, որոց հետ կ'ապրինք:

Մարդ թէեւ ամեն տեղ նոյն է, բայց ապրելու եղանակն ու պայմանը կը փոխուի՝ տեղական պահանջմանց համեմատ. ըստ այնմ կ'աշխատի, կը չափէ, կը ձեւէ ու կը կտրէ իր կանոնները, ծրագիրները, այսպէս երկրէ երկիր, ժողովուրդէ ժողովուրդ դրութիւնք կը փոխուին, ինչ որ մէկ ժողովուրդի օգտակար է, ուրիշ մը հաւասարապէս օգտակար չկրնար ըլլալ:

Առ այժմ մեր պատանեկութեան մեծագոյն մասը պարզ քաղաքացիներ ըլլալու կը պատրաստուին քան համալսարանականներ ըլլալու, թերեւս հազիւ 10 % քարձրագոյն ուսմանց կը հետեւին, կրնա՞յ զոհուիլ մեծամասնութիւնը փոքրամասնութեան, անշուշտ ոչ, բայց մենք կը զոհենք շատը քիչին:

Դասատուներէ ոմանք ալ իրենց աւանդած ուսմանց ու գիտութեանց էական կէտերն ու գլուխները հարեւանցի մը ցուցնելէ վերջը՝ կանգ կ'առնուն շատ անգամ երկրորդական, երրորդական անկարեւոր կէտերու վրայ՝ որք չլացուցիչ պարզունութիւն մը ունին, որոնցմով կարծես կը ճգնին իրենց ճարտարութիւնը ցուցնել, առանց մտածելու թէ՝ համալսարաններու մէջ իսկ գիտութեանց կմախքը միայն կ'ուսուցանեն, թողլով որ աշակերտը իր ինքնօգնութեամբն ու աշխատութեամբը զարգարէ ու կերպարանէ դայն:

Ինչ որ Եւրոպական խելահաս ուսանողութիւնը կ'ուտէ ու կը մարսէ, մեր մանուկ աշակերտութիւնը նոյնը թէեւ կ'ուտէ, բայց կը փսխէ, ինչպէս որ կաթնկեր տըղու մը ստամոքսը չկրնար մարսել պէ՞տքէր զոր կը մարսէ չափահաս ստամոքսը. մարսողը կ'օգտի չի մարսողը կը մլասուի:

Ուրեմն ի՞նչպէս պէտք է դասախօսուին գիտութիւնք:

Բնական է բերանացի. որպէս զի դաստուրք աշխատին, բերանացի աւանդած

դասերնին՝ ի գիր առած պէտք է յանձնեն աշակերտաց. այսպէս անպզաւար խել մը պակասներ պիտի լեցուին, գրաւոր տրուած դասերու ամբողջութիւնը դասագրքեր պիտի կազմէ, այն ատեն իբր նախակարապետ՝ ուսուցիչք ըսելու իրաւունքն պիտի ունենան թէ՝ մենք ալ ծառայութիւն կը մատուցանենք և մեր արդար աշխատութեամբը կ'ապրինք:

Ազդն ալ իր կարգին բնաւ եւրոպացի դասատուի պէտք չէ ստակ տայ այս դասերու համար, որովհետեւ օգտակար չեն կրնար ըլլալ:

Դասախօսութիւնը պէտք է սկսիլ այն կէտէն յորում կը դանուինք և կամաց կամաց ընդլայնել ծանօթութեանց շրջանակը. մեր երկրի հողն ու հանքը, բոյսն ու կենդանին ուսուցանել, փոխանակ հընդհական օձերու, պարսկական առիւծներու, ընձուղտի, ռնդեղջիւրի և կամ ամբարիկեան կապիկներու, չինական ու ճարտական թիթեռներու. հազար անգամ աւելի օգտակար ու շահաւէտ չէ՞ միթէ Պոլսոյ ձուկերու, էնկիւրիի այծերու, Անատոլի շորիի, ասիական ձիերու, մարախի, շերամի, մեղուի, որթալուծի, կենդանական ու բուսական մակաբոյժերու ուսումը: Բոյսերն ալ ճիշդ այս կարգաւ:

Թերեւս հարցնէք թէ արդեօք անուններով միայն, ոչ թէ այդ քարերն ու հողերն ի՞նչպէս կը ճանչցուին, կենդանիք ու բոյսեր ի՞նչպէս կ'աճին ու կը բազմանան, կը ծլին ու կը ծաղկին, ի՞նչ օգուտ կամ մլաս ունին բուսական ու կենդանական աշխարհներու, և վերջապէս եթէ շատցնել կամ ջնջել պէտք է, ի՞նչ միջոցներ պէտք է գործածել:

Ծրագիրս երկու բառի մէջ կ'ամփոփուի. ինչ որ մերն է, ինչ որ մեր երկրի մէջ կը գտնուի այն միայն պէտք է դասախօսել, որովհետեւ այս է մեր դաստիարակութեան պահանջումը:

ԳԱՐԵԳԻՆ Գ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

ՃԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կտակաց հոգաբարձությունը Սրբաճառականաց հոգեւոյն Տ. Գաբրիել եպիսկոպոսի կտակով տեղի ունեցած նուիրատուութեանց խնդրոյն նկատմամբ մատուցած էր իր տեղեկաւորը Քաղաքական ժողովին, որով հանգուցեւոյն ժառանգորդաց կողմէ ներկայացուած առաջարկութեանց մասին պարզեւոր իր տեսութիւններն, անհնդունելի կը գտնէր զայն: Ժողովն անհրաժեշտ գտնելով հոգեւոյն եպիսկոպոսի կամաց համաձայն նոյն կտակին անիւրի գործադրութիւնն առանց որ և է փոփոխութեան, հրաւիրեց հանգուցեւոյն ժառանգորդներն որք ներկայացած էին ժողովին, համակերպիլ կտակին անմիջական և անփոփոխ գործադրութեան:

Ժառանգորդաց երկուքն հաւանեցան այն հրաւերին. իսկ երրորդն յայտնելով թէ չէր տեսած, ցարկ կտակագրին բնագիրը, խնդրեց տեսնել զայն նախագէտ, հետեւաբար ժողովն ելմտական տեսչին յանձնեց՝ կտակագրի բնագիրն, որ կը պահուի Պատրիարքարանը, ցոյց տալ մէկեալ ժառանգորդին:

— Ուսուցչութեան ընտրելիներու քննիչ յանձնաժողովն անցեալ ուրբաթ ի նիստ գումարեցաւ Ղալաթիոյ խորհրդարանն, ատենապետութեամբ Կարապետ Էփ. Իսթիւճեանի և զբաղեցաւ ուսուցչութեան ընտրելիներու քննութեամբ: Այն նիստին ներկայացան մօտակայ դուռաներու ազգային վարժարանաց ուսուցիչներն, որք յատկապէս մայրաքաղաքս եկած էին օրինական քննութիւն անցընելու և վկայական ստանալու համար:

Յանձնաժողովոյ վերջին նիստը տեղի ունեցաւ երէկ:

— Իզմիրի ազգ. վարժարաններու նախորդ տեսուչ Պ. Յովհաննէս Տէր Միրաբեանց որ այժմ Թիֆլիզ կը գտնուի, մտադիր է ելլեր Տրապիզոն երթալ և տեղւոյն ազգայնոց աջակցութեամբ՝ ուսուցչանոց մը հաստատել հոն:

ԱՌՈՂՁՍՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այսօրնի կուսակալութիւնը յուլիս 28 թուականաւ կը հեռագրէ թէ Քաղաքացիական մարտնոցին մէջ գտնուող նաւերու ուղեւորաց և նաւատուեաց առողջական վիճակը գոհացուցիչ է:

— Մէքքէէն յուլիս 28 թուականաւ կը հեռագրեն թէ Մէքքէի մէջ քսան օրէ ի վեր հնտախտի դէպք բնաւ չէ պատահած:

— Եւմէնի կուսակալութիւնէն եկած յուլիս 24 թուականաւ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գամարան ժամանող 2700 եւմէնցի ուխտաւորաց 26ն հնտախտէ մեռեր են և 66ն ալ պարզ հիւանդութիւններէ: Պարագի 808 ուխտաւորներէ՝ 4ը հնտախտէ և 18ը՝ պարզ հիւանդութիւններէ:

— Յուլիս 21էն 28, Պարագի մէջ հընտախտի դէպք չէ պատահած: Յուլիս 26էն 27, Սէվգէշիեուի մէջ հնտախտի 9 մահեր պատահեր են:

— Պուքրէէն կը հեռագրեն յուլիս 29 թուականաւ թէ ի Պրայա, 2 մահ 1 բուժուած, 31 հիւանդ. Սուլինա, 14 հիւանդ նորէն, 7 մահ, 4 բուժուած: Չերնաւուտա, Թուլչա, Կալաց, ոչ մէկ նոր դէպք:

— Պերլինի մէջ հնտախտ ծագելուն վրայ պաշտօնական լուր չկայ:

— Դրացի երկրաց մէջ հնտախտ ծագելուն պատճառաւ, զգուշական միջոցներ ձեռք բերուին ի վիճինա: Ի Կալիչիա, բուն հնտախտի երկու դէպք: Սթիրիոյ մէջ երկու դէպք, մէկ մեռեալ:

— Փիթերպորթէն կը հեռագրեն թէ յուլիս 23էն 5 օրոտոս, Նիմի Նովկորոտի քաղաքին մէջ, ուր տեղի կ'ունենայ տարեկան մեծ տօնավաճառն, և նոյն նահանգին մէջ 258 հնտախտակերպ, 102ը մեռեալ: Վարչաւ 1, Խարքով 4:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԱՆ

Ի Տպարանի ԱՐԵՒԵԼԻ ԵՆ ՄԱՍԻՍ Ըրագրող